
ՎԱՅՐԻ
ՀԱՎԱՔ
ՎԱՅՐԻ
ՀԱՎԱՔ



Ծրագիրը ֆինանսավորվում է եվրոպական միության կողմից

Ծրագրի իրականացման գործընկեր

Այս հրապարակումը պատրաստվել է եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՇԵՆ ԲՀԿ, և այն որևէ ձևով չի արտահայտում եվրոպական միության տեսակետները:



**Սիբեխ սովորական** - տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է բաց, չոր լանջերին, անտառեզրերին, թփուտներում, դաշտերում: Ծաղկում է հունիս - օգոստոս ամիսներին: Պտուղները հասունանում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Բույսի բոլոր մասերը սուր համ ունեն: Մատղաշ տերևները և ընձյուղները օգտագործվում են սննդի մեջ՝ խաշած և տապակած վիճակում: Ժողովրդական բժշկության մեջ սիբեխի մանրացրած տերևները դնում են վերքերի վրա՝ արագ լավացման նպատակով:



**Սինդրիկ** - հովտաշուշանազգիների ընտանիքի կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 30 (այլ տվյալներով՝ 50) տեսակ:

***Հայկական տարանունները.***
կցմծուկ, սամնտրուկ, սանդրուկ, սնդրիկ, սնդրուկ, Սողոմոնի կնիք, քրմնցուկ:

Բոլոր տեսակներն էլ ունեն բուժական և սննդային նշանակություն: Սինդրիկը բազմանում է սերմերով և կոճղարմատով՝ հաճախ տալով լայնատարած բուսուտներ: Պտղակալում է ոչ ամեն տարի:



**Ծրեշ** - շրեշտ, օղին, փայլկտուկ, քսանտոռեավորների ընտանիքի կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Տարածված է Գեղարքունիքի, Արագածոտնի, Սյունիքի մարզերի լեռնային գոտիներում (1500-2300 մ բարձրություններում): Աճում է չոր, քարքարոտ վայրերում: Կոճղարմատը հոծ է, իլիկաձև հաստացած, մսալի: Ցողունն ուղղաձիգ է, բարձրությունը՝ 40-60 սմ: Տերևներն արմատամերձ են, երկար, գծաձև: Ծաղկաբույլը բազմածաղիկ ողկույզ է, ծաղիկները՝ սպիտակ, դեղին, վարդագույն, կարմրավուն, գորշ և այլն: Ծաղկում է մայիս-հունիսին: Պտուղը գնդաձև տուփիկ է: Որոշ տեսակների արմատները պարունակում են դեքստրինանման նյութեր (օգտագործվում են սոսինձ պատրաստելու համար), իսկ տերևները՝ ներկանյութ: Մատղաշ տերևներն ուտելի են: Մեղրատու է և գեղազարդիչ:



**Ծնեբեկ** - շուշանազգիների ընտանիքի բազմամյա թփերի կամ լիանանման բույսերի ցեղ: Ունի բազմամյա, խիստ ճյուղավորված կիսաթփեր ու լիաններ: Բազմացողուն է, խիստ ճյուղավորվող: Հայաստանում հայտնի է 7 վայրի տեսակ, որոնք տարածված են գրեթե բոլոր շրջաններում: Պարունակում են վիտամիններ, սպիտակուցներ, ածխաջրեր, հանք. աղեր և այլն: Դեղատու ծնեբեկի արմատները և մատղաշ ընձյուղները դեղամիջոց են. պարունակում են ասպարագին ալկալոիդը: Պատրաստուկներն օգտագործում են որպես միզամուղ: Հասուն պտուղները պարունակում են շաքարներ, խնձորաթթու, կարոտին (A-նախավիտամին), իսկ սերմերը՝ ճարպեր: Օգտագործվում է թարմ և վերամշակված (չիր, կոմպոտ, մուրաբա, հյութ, ջեմ, պովիդլո և այլն): Ունի համային, սննդ. և բուժիչ հատկանիշներ: Պարունակում է շաքարներ, օրգանական թթուներ, վիտամիններ, բուրավետ և կենսաբանական ակտիվ նյութեր: Մշակովի սորտերի մեծ մասի կորիզի միջուկը քաղցր է: Հայաստանի պայմաններում պտուղները հասունանում են հունիսի 15-ից օգոստոսի 20-ը:



**Մանդակ (Շուշանբանջար պալարակիր)** – երկամյա խոտաբույսերի ցեղ է: Ցողունը մերկ է, կլորավուն, բարձրությունը՝ մինչև 100 (150) սմ: Տերևները մերկ են կամ թավոտ, բազմակի փետրաձև կտրտված: Ծաղկաբույլը բարդ հովանոց է, ծաղիկները՝ սպիտակ կամ վարդագույն: Ծաղկում է հունիսին: Պտուղը մանր խոզաններով պատված, էլիպսաձև, կողքերից թույլ սեղմված սերմ է: Տարածված է Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Աճում է չոր, քարքարոտ լանջերին: Երիտասարդ տերևներից պատրաստում են աղցաններ և ապուրներ, իսկ ցողուններն օգտագործում են թարմ, չորացված, աղ դրած կամ եփած վիճակում:



**Ավելուկ** - միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսերի և թփերի ցեղ է: Ավելուկը հայկական ուտելի այն բույսերից է, որը հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում: Ավելուկից պատրաստված հայկական ուտեստները ոչ միայն բազմազան են ու տարահամ այլև անչափ օգտակար: Աճում է մարգագետիններում, նոսրանտառներում, թփուտներում, անտառեզրերին, լեռնալանջերին, գետափերին, խոնավ վայրերում և այլն: Պարունակում է վիտամիններ, թթուներ, սապոնիններ, ներկանյութ և այլն: Ավելուկն օգտագործում են ժողովրդական բժշկության մեջ դիզենտերիայի, լյարդի հիվանդությունների, մարսողության խանգարման ժամանակ: Մննդի մեջ գործածում են ավելուկի չորացված տերևները:



**Անանուխ** - մարդկությանը հայտնի է եղել անհիշելի ժամանակներից: Անանուխը կոճղարմատավոր, բազմամյա խոտաբույս է: Բույսի վերգետնյա մասը պարունակում է եթերայուղ, որի քանակը ծաղիկներում կազմում է 4 - 6 տոկոս: Բույսը ցրտադիմացկուն է, խոնավասեր ու լույսի նկատմամբ պահանջկոտ: Ծաղկում է հիմնականում հուլիս-օգոստոս ամիսներին: Հումքը հավաքում են ծաղկման սեզոնին, մի քանի ժամ թողնում արևի տակ, հետո լրիվ չորացնում համեմատաբար հով տեղում: Մշակված հումքը պոլիէթիլենե տոպրակի մեջ պահելը ճիշտ չէ: Պետք է պահել կտորի տոպրակի կամ փայտի արկղիկի մեջ: Անանուխը օգտագործվում է նաև սննդի մեջ: Այն ավելացնում են կարկանդակներին, աղցաններին, պանրին, ճաշերին: Նրանով համեմում են թեյը, լիկյորը, հրուշակեղենը, օգտագործում են նաև կոսմետիկայում:



**Ուրց** - 10-35 սմ բարձրության, գետնի վրա փռված, խիստ ճյուղավոր, հիմքում փայտացող ցողունով կիսաթուփ է: Ունի ձվաձև տերևներ: Ծաղկաբույլերը հիմնականում գտնվում են ճյուղերի ծայրերին: Բույսը ծաղկում է մայիսից մինչև աշուն, իսկ պտուղները հասունանում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Ամբողջ բույսն ունի սուր, հաճելի, բուրավետ հոտ: Հանդիպում է մեր հանրապետության լեռնային և նախալեռնային շրջաններում՝ քարքարոտ, արևաշատ լանջերին, քերծերին, բլուրների վրա, տափաստանային և ալպյան մարգագետիններում, սոճու և գիհու անտառներում, խամահողերում, դաշտերում և այլուր՝ հաճախ առաջացնելով հոծ ճմուտներ: Բազմանում է սերմերով և վեգետատիվ եղանակով: Ամբողջ բույսը պարունակում է 0,5-1% եթերայուղ: Օգտագործում են ուրցի վերգետնյա մասը, որը կտրում են դանակով կամ մանգաղով՝ առանց արմատը հանելու: Կտրում են բույսի ծաղկման ընթացքում, չորացնում բացօթյա՝ տանիքում կամ քամահարվող սենյակում:





# ՎԱՅՐԻ ՀԱՎԱՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ: ԼԱՅՆ ՏԱՐԱԾՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲՈՒՅՍԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

Չնայած մշակովի բույսերի բազմազանությանը՝ մարդը շարունակում է օգտվել բնության բարիքներից, այդ թվում նաև զբաղվելով վայրի հավաքով: Վայրի աճող ուտելի հատապտուղները, պտուղները, խոտաբույսերը և սնկերը, ինչպես նաև դեղաբույսերը մեծ նշանակություն ունեն սննդի, դեղորայքի, կոսմետիկայի և օծանելիքի արտադրության մեջ: Վայրի հատապտուղները օգտագործվում են հյութերի, մուրաբաների, թեյերի, պաղպաղակների, յոգուրտների, հրուշակեղենի արտադրության մեջ, իսկ հատապտուղների կորիզներից ստացվում է յուղ: Հատապտուղներն օգտագործվում են նաև բժշկության մեջ:

ՀՀ-ում վայրի հավաքով զբաղվում են տարբեր տարածաշրջաններում: Վերջին տարիներին հանրապետությունում ավելացել է այն վերամշակող ձեռնարկությունների թիվը, որոնք արտադրության համար որպես հումք մթերում են վայրի հատապտուղներ: Շատ ընտանիքների համար վայրի հավաքը դարձել է հավելյալ եկամտի աղբյուր, ինչի հետևանքով հավաքի ծավալները տարեցտարի ավելանում են:

Վայրի հավաք, իհարկե, թույլատրելի է, սակայն այն պետք է կատարվի խելամիտ՝ նվազագույնի հասցնելով բնությանը պատճառած վնասը: Սխալ կատարվող վայրի հավաքը կարող է լուրջ վնասներ հասցնել բնությանը և խախտել տեսակային հավասարակշռությունը: Որևէ բուսատեսակի գերհավաքը կարող է պատճառ հանդիսանալ նրա թվաքանակի նվազման: Այսպիսի փոփոխությունները բնության մեջ ունենում են իրենց բացասական հետևանքը:

Հաշվի առնելով այս ամենը՝ կարևոր է, որ վայրի հավաք կատարող մարդիկ տեղեկացված լինեն համապատասխան կանոններին: Սույն գրքույկը նպատակ ունի իրազեկել վայրի հավաքի հիմնական պահանջներ, որոնք հիմնականում վերցված են ՀՀ անտառային օրենսգրքից:







# ՎԱՅՐԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ, ԸՆԿՈՒՅԶՆԵՐԻ, ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ԵՎ ՍՆԿԵՐԻ ՄԹԵՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ





- Պտուղների, ընկույզների, հատապտուղների և սնկերի հավաքն ու մթերումն իրականացվում են պետական և համայնքային անտառների բոլոր տեղամասերում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
- Պտուղների և ընկույզների հավաքն ու մթերումն անհրաժեշտ է իրականացնել՝ վնաս չպատճառելով պտղակիր և ընկուզակիր ծառաթփատեսակներին:
- Հատապտուղների և սնկերի հավաքը պետք է կատարվի այնպիսի մեթոդներով, որոնք բացառում են հատապտուղների թփերի և սնկամարմինների վնասումը և չեն խոչընդոտում նրանց բնական վերականգնմանն ու պաշարների վերարտադրությանը:
- Հատապտղային թփուտները անհրաժեշտ է պահպանել պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակում:





# ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ



**Թոխի** – բազմամյա խոտաբույս է: Տարածված է Շիրակի, Տավուշի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում: Աճում է քարքարոտ լանջերում: Ցողունն անկյունակողային է, ճյուղավորվող, բարձր՝ մինչև 1 մ: Տերևները գորշականաչագույն են՝ բազմակի փետրաձև կտրտված: Ծաղկաբույլը հովանոց է, ծաղիկները՝ դեղին: Պտուղը ձվաձև է կամ գնդաձև: Վերգետնյա զանգվածից ընձյուղները հավաքում են ոչ լրիվ հասունացման ժամանակ, երբ բույսերն ունենում են կանաչագորշ գույն: Օգտագործում են թթու կամ աղ դրված վիճակում:



**Ծուչանբանջար** - երկամյա կամ բազմամյա խոտաբույս է: ՀՀ-ում տարածված է Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի և այլ մարզերում, բացատներում, անտառեզրերին, լեռների խոտածածկ լանջերին, թփուտներում: Ցողունն ուղղաձիգ է (բարձրությունը՝ 20–160 սմ), ճյուղավորվող, ստորին մասում՝ փշանման մազմզուկներով պատված: Տերևները փետրաձև կտրտված են: Ծաղկաբույլը բարդ հովանոց է, ծաղիկները մանր, սպիտակ (հազվադեպ՝ վառ կարմիր), վարդագույն կամ այլ երանգի են: Ծաղկում է հունիս-հուլիսին: Որոշ տեսակների մատղաշ ցողուններից ու արմատներից պատրաստում են աղցան և այլ կերակուրներ, թթու դնում:



**Մամխասալոր** – թույլ աճեցողությամբ թուփ կամ ծառանման տեսակ է: Մեզ մոտ շատ տարածված է Ալավերդու, Վանաձորի, Իջևանի, Նոյեմբերյանի և Վայքի շրջաններում՝ վայրիացած վիճակում: Պտուղները նման են շլորի պտուղներին, մեծ մասամբ սև:





**Ընկուզենի** - 20-30 մ բարձրությամբ, գեղեցիկ բնով ծառ է, որի տրամագիծը հասնում է 1,5-2 մ-ի: Կեղևը մոխրագույն է, ճաքճքված: Տերևները բնորոշ հոտ ունեն: Միատուն է, ծաղիկները բաժանասեռ են: Ծաղկում է տերևների բացվելու հետ միաժամանակ: Պտուղները հասունանում են օգոստոսի վերջին և սեպտեմբերի ընթացքում: Կեղևը փայտացած է, կարծր, արտաքինից ծածկված կանաչ, մսալի պատյանով: Ամեն տարի առատորեն ծաղկում է, սակայն ուշ գարնանային ցրտահարությունների դեպքում որոշ տարիներին բոլորովին բերք չի տալիս: Պտուղները կամ հավաքում են ծառի ճյուղերը թափ տալով կամ պարբերաբար հավաքում են գետնին թափված պտուղները: Ապրում է 300-400 տարի: Ընկուզենին պտղատու հրաշալի տեսակ է: Օգտագործվում է նաև կանաչապատման, անտառապատման, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման համար:



# ՈՒՏԵԼԻ ԲՈՒՅՍԵՐԻ, ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ



- Որպես ուտելի և դեղամիջոց կամ որպես տեխնիկական հումք օգտագործվող բույսերի և դրանց առանձին մասերի հավաքն ու մթերումն իրականացվում է պետական և համայնքային անտառների բոլոր տեղամասերում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
- Բույսերի և դրանց առանձին մասերի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաքն ու մթերումը թույլատրվում է իրականացնել այնպիսի ծավալներով, որ ապահովվի նրանց ժամանակին բնական վերականգնումն ու պաշարների վերարտադրությունը:
- Խոտաբույսերի վերգետնյա մասերը պետք է հավաքել՝ չվնասելով արմատները:
- Տերևները կարելի է հավաքել, երբ դրանք ամբողջությամբ ձևավորվել են կոկոնակալման և ծաղկման փուլում:
- Տերևները պետք է կտրել տարբեր մեխանիկական հարմարանքներով (դանակ, մկրատ և նմանատիպ այլ գործիքներ) կամ զգուշությամբ պոկում են ձեռքով:
- Մաքուր խոտաբուսային ծածկոցներում անհրաժեշտ է հնձել ամբողջ վերգետնյա զանգվածը, և պոկել տերևները:
- Ծաղկաբույլերը և ծաղիկները թույլատրվում է հավաքել ծաղկման սկզբնական փուլում՝ կտրելով մեխանիկական հարմարանքներով: Ծաղկաբույլերի և ծաղիկների հավաքման ժամանակ յուրաքանչյուր բուսատեսակի ընդհանուր քանակի 20-25%-ը թողնում են սերմնակալման համար:
- Պալարների (պալարասոխուկների) մթերումն իրականացվում է վերգետնյա հատվածների մահանալու ընթացքում կամ վաղ գարնանը մինչև վեգետացիայի սկիզբը: Պալարների (պալարասոխուկների) մթերման ընթացքում, դրանց մի մասը պետք է թողնել հողում, որպեսզի ապահովվի բույսի վեգետատիվ բազմացումը: Երիտասարդ բուսակներից պալարների (պալարասոխուկներ) մթերումն արգելվում է, քանի որ դրանք քիչ քանակությամբ զանգված են առաջացնում:
- Դեղաբույսերի հումքի կրկնակի հավաքը միևնույն հանդակից կամ թփուտից թույլատրվում է միայն տվյալ բուսատեսակի հումքի պաշարը ամբողջական վերականգնվելուց հետո:
- Որևէ տեսակի դեղաբույսի հումքի կրկնակի հավաք իրականացնելու վերաբերյալ ժամկետների բացակայության դեպքում անհրաժեշտ է.
  - միամյա խոտաբույսերի ծաղկաբույլերը և վերգետնյա օրգանները մթերել միևնույն տարածքներից երկու տարին մեկ անգամ,
  - բազմամյա խոտաբույսերը (կախված տեսակից և տեղանքի վիճակից) մթերել 2-3 տարին մեկ անգամ,
  - դեղաբույսերի մեծ մասի (կախված տեսակից և քանակից) ստորգետնյա օրգանները մթերել ոչ հաճախ, քան 3-5 տարին մեկ անգամ:



## ՀԱՎԱՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԼԻՆԵՆ ՆԱԵՎ...



- հավաքը չպետք է ոչնչացնի կամ վտանգի այլ կենդանի օրգանիզմների բնակության վայրը կամ սնունդը,
- հավաքել կարելի է միայն այն բույսերը կամ պտուղները, որոնք լավ հայտնի են հավաք կատարողին (անհրաժեշտության դեպքում կարելի է օգտվել հատուկ ուղեցույցներից),
- անտառում և այլ տարածքներում պետք է խստորեն պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները,
- հավաք չի թույլատրվում մայրուղիների, երկաթգծերի, ճամփեզրերի մոտ տարածքներում, ինչպես նաև թունաքիմիկատներով և այլ նյութերով աղտոտված, արդյունաբերական գործարաններին հարակից տարածքներում,
- արգելվում է իրականացնել Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հավաք,
- չի կարելի հավաքման ընթացքում կենցաղային թափոններով աղտոտել շրջակա միջավայրը,
- խոտաբույսերի տերևները սովորաբար հավաքում են մինչև մասսայական ծաղկումը,ծաղիկները թույլատրվում է հավաքել ծաղկման սկզբում, իսկ արմատները հավաքում են, երբ բույսերը լինում են լավ զարգացած և հիմնականում մինչև ծաղկելը,
- հավաքը պետք է կատարել օրվա այն ժամին, երբ ցողը չորացել է: Ցանկալի չէ հավաքը կատարել անձրևոտ կամ խոնավ եղանակին, քանի որ խոնավ հումքը ավելի շուտ է ենթակա փչացման:







**Վայրի տանձենի** – Հայաստանի անտառներում ամենատարածված պտղատու տեսակներից մեկն է: Առանձին տեղերում տարածված է մեծ մասսիվներով: Վայրի տանձի պտուղները մանր են, կլորավուն: Պտուղների հավաքը սկսվում է սեպտեմբեր ամսից: Վայրի տանձենու տարբեր տեսակներ տարածված են Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Նրա մեջ պարունակվող հատուկ եթերային յուղերը բարձրացնում են օրգանիզմի դիմադրողականությունը: Պտուղներն օգտագործվում են օղի, կոմպոտ, մուրաբա, ջեմ և չիր ստանալու համար:



**Վայրի խնձորենի** – վայրի վիճակում աճում է Հայաստանի բոլոր անտառներում, անտառների եզրերում, թփուտներում և բացատներում: Առանձին տեղերում խնձորենին տարածված է մեծ մասսիվներով: Տարածված են մի քանի տեսակներ: Ամենից շատ տարածում ունի Արևելյան խնձորենին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին: Պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբերին: Պտուղներից պատրաստում են մուրաբա, գինի, օղի և այլն:





**Արոսենի** - վարդազգիների (վարդածաղիկներ) ընտանիքի տերևաթափ ծառերի կամ թփերի ցեղ: Ծառերի բարձրությունը մինչև 15 մ է: Տերևները հերթադիր են, կենտփետրածևից մինչև բլթակավոր և ամբողջական, ատամնաեզր կամ սղոցաեզր: Ծաղկաբույլը վահանիկանման է, ծաղիկները՝ երկսեռ, սպիտակ: Ծաղկում է մայիսին: Պտուղները հատապտղանման խնձորիկներ են՝ կլոր, օվալ, հազվադեպ՝ տանձաձև, կարմիր, դեղին, նարնջագույն, դարչնագույն, թավոտ կամ մերկ, թթու-դառնավուն կամ քաղցր: Սերմերը հաճախ եռակող են, երկարավուն, օվալաձև կամ հավկաձիր ձվաձև:

Պարունակում են շաքարներ, վիտամին C, կարոտին (A-նախավիտամին), օրգանական թթուներ, եթերայուղեր, աղանյութեր, միկրոտարրեր և այլն: Պտուղներն օգտագործում են սննդի (թարմ և վերամշակված՝ թուրմ, մուրաբա, օղի, լիկյոր և այլն) և բժշկության մեջ: Դրանցով սնվում են թռչունները և անտառային կենդանիներ: Սերմերը պարունակում են ճարպեր: Փայտանյութն օգտագործվում է կահույք և երաժշտական գործիքներ պատրաստելու համար: Տարածված է Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերի վերին անտառային և ենթալպյան գոտիներում: Աճում է ժայռոտ, քարքարոտ վայրերում, կիրճերում, թփուտներում, կաղնու նոսրանտառներում (1000-2500մ բարձրություններում):



# ՎԱՅՐԻ ՀԱՎԱՔԻ ԵՆԹԱԿԱ ՄԻ ՔԱՆԻ ԲՈՒՅՍԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## ՊՏՈՒՂՆԵՐ ԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐ



**Մասրենի** - մինչև 2 մ բարձրությամբ թուփ է: Ունի փայտանման ամուր, փշերով ծածկված, կանաչ դարչնագույն կամ գորշ շիվեր: Բազմանում է սերմերով և արմատաշիվերով: Բավականաչափ ցրտակայուն է, լուսասեր, չորադիմացկուն, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, իսկ պտուղները հասունանում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Պտուղները հավաքում են ուշ աշնանը և չորացնում ստվերում: Աճում է մեր հանրապետության անտառներում, թփերի մեջ, արտեզրերին, գետահովիտներում, լեռնալանջերին, Մեղրու, Գորիսի, Ստեփանավանի, Մարտունու, Եղեգնաձորի, Իջևանի, Դիլիջանի, Շամշադինի, Նոյեմբերյանի և այլ շրջաններում՝ տեղ-տեղ տալով ընդարձակ բուսուտներ:



**Չիչխան** - Չիչխանը 2-6 մ բարձրությամբ ծառանման թուփ է: Ունի գծակերպ տերևներ և մանր հոտավետ դեղին ծաղիկներ: Հյութեղ, կլորավուն, շիկակարմիր կորիզապտուղները խիտ կպած են ճյուղերին: Ծաղկում են գարնան կեսերին, հասունանում աշնանը և պահպանվում ճյուղերին ողջ ձմռանը: Պտուղը հավաքում են ճյուղերը թափահարելով կամ հատուկ ունելիով: Սառեցրած պտուղները պահպանվում են մինչև 6 ամիս, թարմը՝ մի քանի օր: Չիչխանի պտուղներից պատրաստում են հյութ, ջեմ, մուրաբա, կիսել, դոնդող, լիկյոր, մրգօղի: Կորիզներից ստանում են յուղ:







**Ծորենի (բարբարիս, կծոխուր)** – բազմամյա թփեր, երբեմն՝ ոչ մեծ ծառեր են:

Տարածված են Արագածոտնի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Աճում է անտառեզրերին, չոր լանջերի թփուտային մացառուտներում, գետահովիտներում և այլն: Բույսն ամբողջությամբ պատված է փշերով:

Բազմանում է սերմերով, կտրոններով, թփի կիսմամբ: Ծաղկաբույլը ողկույզ է, ծաղիկները՝ մանր, դեղին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին: Պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբերին և ողջ ձմռան ընթացքում մնում են թփի վրա: Պտուղը երկարավուն, վառ կամ մուգ կարմիր, թթվաշ համապտուղ է: Պարունակում են ալկալոիդներ, եթերայուղեր, վիտամիններ C, E, ներկանյութեր, և այլն: Պտուղները հավաքում են կարմիր, բայց ոչ շատ հասած վիճակում: Հասունացած պտուղները փափուկ են և շուտ վնասվում են: Հավաքում են պտղաողկույզով: Պտուղներից պատրաստում են մուրաբա, սոուս, լիկյոր, և այլ ըմպելիքներ: Բնափայտն ամուր է, օգտագործվում է ատաղձագործության մեջ: Մեղրատու է և գեղազարդիչ:



**Ալոճենի** - Վարդազգիների ընտանիքին պատկանող թուփ է կամ ոչ մեծ ծառ՝ փշոտ ճյուղերով: Ալոճենու տերևները պարզ են հերթադիր: Ծաղիկները սպիտակ են, երբեմն էլ կարմրավուն: Պտուղները մանր են, կարմրաբոսոր, 3–4 սերմերով: Ցեղի անունը ծագել է հունարեն «Կռատաիոս» բառից, որ նշանակում է *ուժեղ*: Պտուղները պարունակում են մի շարք օրգանական թթուներ, սորբիդ, ճարպային յուղեր, կարոտին, C վիտամին, դաբաղանյութեր, քիմիական տարրերից՝ կոբալտ, պղինձ, երկաթ, մանգան, ցինկ, մոլիբդեն և այլն: Ալոճենու բուժական հատկությունների մասին դեռևս մեր թվարկության առաջին դարում նշել է հույն բժիշկ Դիոսկորիդը, իսկ ժողովրդական բժշկության մեջ շատ վաղուց պտուղներն օգտագործվել են թեյի, փոշու կամ կիսելի ձևով, ծաղիկները՝ թեյի մեջ, սրտային մի շարք հիվանդությունների, գլխապտույտների, հևոցի, անքնության ժամանակ և այլն: Ալոճի ծաղիկներից և պտուղներից պատրաստված դեղամիջոցները ուժեղացնում են սրտամկանի կծկումները, բարելավում սրտի և ուղեղի արյան շրջանառությունը, վերացնում անոթային սպազմը, սրտի շրջանի ցավերը, կանոնավորում սրտի ռիթմը, առաջ բերում տևական հանգստացնող ներգործություն: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Ալոճենու պտուղներն ուտում են ինչպես թարմ, այնպես էլ չորացած վիճակում: Դրանցից պատրաստում են կոմպոտ, կիսել, դոնդող, մարմելադ, կարամել: Աղացած պտուղները խառնում են ալյուրին՝ հացին համեղի համ տալու նպատակով: Պտուղները և տերևները փոխարինում են թեյին և սուրճին: Ալոճենին հիանալի դեկորատիվ ծառ է, մեղրատու,ամուր բնափայտով: Տարածված է Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերի վերին անտառային և ենթալպյան գոտիներում: Աճում է ժայռոտ, քարքարոտ վայրերում, կիրճերում, թփուտներում: